ժեշտ քննութեան մը հետեւանքն այն պիտի ըլլայ՝ որ կամ ճանչնաք ձեր անձեռնհասութիւնը այդ ասպարիզին մէջ և անկէց քաշուիք հեռանաք, և գնաք ձեր կարողութեան համապատասխան դիրք մը բռնելու ընկերութեան մէջ, և կամ շտկէք ձեր թիւր ըմբռնումը՝ որ ձեր բարձր պաշտօնի կոչման անհամաձայն է, և ուղիղ հիման, հաւատարիմ և անկեղծ գործունէութեան և գիտակից ձեռնհասութեան մը վրայ ամրացնէք ձեր ջանքերը, որոնք այն ատեն միայն՝ պիտի դադրին ըլլալէ . . . ԶՈՒՐ ՋԱՆԳԵՐ, որովհետեւ պիտի ըլլան անկեղծութեան մ'արգասիքներ. և հետեւաբար ինձ ալ և ինձ նման փափաքողներու ալ՝ առիթ պիտի տան միխիթարութեամբ դիտելու և հաչակելու ձեր ՕԳՏԱՒԷՏ ՋԱՆԳԵՐՈՒՆ արդիւնքները։

Հ. Ա. Տ-ՐՈՅԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ

Քանի մը ամիս առաջ յԱսորիս և ի Կիլիկիա ճանապարհորդութիւն մ'ընելով, առիթ ունեցայ նորանոր ձեռագիրներ տեսնելու. զորս եթէ անկարելի եղաւ ինձ ստանալ ամ և է միջոցաւ, սակայն ազնիւ ստացողաց թոյլտուութեամբ՝ կրցայ անոնց յիշատակարանները օրինակել. որոնք քիչ ատենէն ամբողջական հաւաքածոյի մը մէջ լոյս պիտի տեսնեն։

Հալէպի Հայոց առաջնորդ Կարապետ Ծ. վ. Տէր Կարապետեան սրբազանն, ինձ ցոյց տուաւ դէզ մը ձեռագիրներ, զորս իւր գիտական խնամքովը իրենց գարաւոր բանաւէն — մութ ձեղունէ մը — նորապէս ազատելով, մաքրել և կարգի դնել կու տար։ Կը յուսանք որ այսպիսի լուսամիտ անձի մը ձեռքով դեռ շատ գանձեր կորստենէ կ'ազատին։ Ձեռագրաց թիւը, անունը, բովանդակութիւնը և մանաւանդ յիշատակարանները խոստացաւ բարձրապատիւ սրբազանն յղել ի Ս. Ղազար, որուն կատարման սպասելով՝ կանխիկ շնորհակալութիւնս կը յայտնենք։ Ձէյթունոյ մէջ, բաց ի Ս. Աստուածածնայ վանքի մէջ գտնուող քանի մը թղթեայ և յետին դարու ձեռագիրներէն, կայ ուրիշ թանկագին Աւետարան մը, մագաղաթեայ, երկսիւնագիր, զարդարուած գեղեցիկ նկարներով և պէսպէս գարդերով. ոսկեզօծ պատկերի, ոսկեզօծ ծաղրի և տառի շռայլութիւն մը ամէն էջի վրայ. ընդարձակ յիշատակարան մը եռեւր, որուն վերջի մասերուն մէջ տեղւոյն անցքերէն՝ յիշատակութիւնք կան։ Այս կոստանդին կաթողիկոսի Աւետարանն է, . . . գրուած, որուն վրայ բարեպաշտ Ձէյթունցին աւելի կը գուրգուրայ և խնամք կը տանի՝ քան հնա-

digitised by A.R.A.R.@

գէտն կամ գիտնականն։ Մենք շնորհակալութիւններս կը յայտնենք Տէր Կարապետին, անդացի Հին առաջնորդին, որ հաճեցաւ մեզի ցոյց տալ այդ գանձը և օգտուիլ անկից։ Նոյնպէս մեր խորին շնորհակալիքը կը յայտնենք Ներսէս Վ. Խապայեանց սրբազանին, որ Ս. Աստուածածնայ վանուց ձեռագիրքը մեծ ազնուութեամբ մեր տրամադրութեան տակ դրաւ և ամէն դիւրութիւն ընծայեց։

Մարաշու մէջ տեսայ քանի մը աննշան ձեռագիրներ, որոց մէկուն կողքին ներսի կողմը գտայ Եղիշէէն կտորներ, որոնք ինձ ձեռագրէն աւելի յարգի թուեցան, և առանց մեծի դժուարութեան կրցայ ստանալ զանոնք. ինն կտոր թղթեր են, զորս իրարու քով բերելով կ'ունենանք ութ էջ կամ չորս թուղթ, և կը բովանդակեն Եղիշէին Ա. Բ. Դ. և Ե. Ցեղանակներէն հատուածներ։ Գրութիւնը երկաթագիր է, ամենահին թղթի վրայ. մեզ կը թուի թէ երկոտասաներորդ դարու գործ մ'է, թէ՛ գրի ձեւէն և թէ՛ թղթի հնութենէն հետեւցնելով։ Իւրաքանչիւր էջ երեք սիւներէ կը բաղկանայ, և իւրաքանչիւր սիւն 35 տողերէ. բայց մեր ձեռքի տակ ունեցած կտորներուն մէջ ամբողջական կատարեալ թուղթ չունենալով, տողերու թիւը ձեռագրի վրայ եղած քննութեամբ հանեցինք։ Այս պակասաւոր վիճակին մէջ թղթերը ունին 37 հրդմ. երկայնք, 28 հրդմ. լայնք, 5 հրդմ. լուսանցք և 10 հրդմ. իւրաքանչիւր տողերու երկայնքը. իսկ ամբողջական ձեռագիրը ունեցած կը տեսնուի 52 երկայնք և 42 լայնք։ Լուսանցքի վրայ զարդանկարներ չկան. տեղ մը միայն կարմիր և երկնագոյն ներկի հետքեր կը տեսնուին։ Մելանը տկար սեւ մելան է. իսկ կարմիր գունով մէկ տող միայն կայ, թէեւ բազմաթիւ գլխագրերն ևս նոյն գունով կրնային գրուիլ։

Կարեւոր տարբերութիւնները և շարադասութեան զանազանութիւնները շեղագրած ենք. իսկ բառի կամ տառի պակասը կէտերով լրացուցած, որպէս զի հաւատարիմ պատկեր մ'ընծայենք ձեռագրին, որուն տողերը ճիշդ այնպէս կը տպենք ինչպէս որ են։

Ոնձեւացեաց օրինակի և Եղիշէի ա՛յլ ձեռագրաց վրայ՝ Հանդէս Ամսօրեայի վերջին թուին մէջ (թիւ 10, 11 – Հոկտեմբեր, Նոյեմբեր) արդէն խօսուած է ընդարձակօրէն, (էջ 334)։

Հոն համեմատուած են Ոնձեւացեաց օրինակն և Գարեգին Սարկաւագի ձեռագիրը. թիւ 1641։

Վերջնոյս մէկ ընթերցումը՝ «զթոյն դառնութեան» կը համապատասխանէ մեր նոր ձեռագրին ընթերցուածոյն, բայց մեր օրինակի ուրիշ բազմաթիւ առանձնայատկութիւնք ցոյց կու տան, թէ կարելի չէ նոյն խմբի մէջ դասակարգել զայն։

Հարկ չենք համարիր շեշտել մեր նորագիւտ հատակտորիկի այն տարբերութեանց վրայ, որոնք ոչ միայն բնագրագիտական, այլ նաեւ պատմական տեսակէտէ հետաքրքրական են, ինչպէս պիտի անդրադառնան բանասէրք՝ հետեւելով բաղդատութեանս ընթացքին։

Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

ՁԵՌԱԳԻՐ, Ա ԹՈՒՂԹ, ԷՋ ա, ՍԻՒՆ ա

Քանզի յոյժ սիրելի էր
նմա խռովութիւն արիւնհե
ղութեան։ Վասն այսորիկ
յանձն իւր տարաբերէր
թէ յո՛ թափեցից զդոյնս
դառնութեան և կամ ուր
բացատեցից զբազմու
թիւն նետից։
Եւ առ յոյժ յիմարութեան,
իբրեւ զգազան մի կատաղ

ԵՂԻՇԷ, ՏՊ. ՓՈՐԹ. ՓԱՇԱՅԻ, ՎԵՆԵՏԻԿ 1903, էջ 180

Քանզի յոյժ սիրելի էր
նմա խռովութիւն, արիւնհե-
ղութեան, վասն այնորիկ
յանձն իւր տարաբերէր,
եթէ յո՛ թափեցից զդառ-
նութիւն թունից, կամ ո՛ւր
բացատրեցից զբազմու-
թիւն նետիցն։
Եւ առ յոյժ յիմարութեան
իբրեւ զգազան մի կատաղի

digitised by A.R.A.R.@

ՁԵՌԱԳԻՐ, Ա ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ ա	ԵՂԻՇԷ, ՏՊ. ՓՈՐԹ. ՓԱՌ. ՎԵՆԵՏ. 1903, էջ 180
ի յարձակեցաւ ի վերայ	յարձակեցաւ ի վերայ
. . խարհին Հայոց[1] և Յու	աշխարհին Յունաց.
նաց։ Էր եհար մինչեւ	եհար մինչ
. քա. աքն Մծբին և զբա	ի քաղաքն Մծբին և զբա-
զում գաւառս Հոռոմոց	զում գաւառս Հոռոմոց
աւերեաց ասպատակաւ,	աւերեաց ասպատակաւ,
և զամենայն եկեղեցիսն	և զամենայն եկեղեցիս
հրձիգ արար։ և ահաբեկ	հրձիգ արար. կոտորեաց զաւար և զգերի և ահաբեկ
արար զ. մենայն զաւրսն	արար զամենայն զօրս
աշխարհին։	աշխարհին։
Իսկ Գիոդոս կայսր նրա	Իսկ երանելին Թէոդոս կայսր,
ճեղի քանզի էր խաղաղա	քանզի խաղաղա-
.........., ոչ կամեցաւ	սէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ
.......չ ճորա եղա. եղ	ելանել ընդառաջ
.......մաւ, ... այր	պատերազմաւ. այլ այր
....լ ան ... որ էր	մի Անատոլ անուն, որ էր
ասպ. րապետ արեւելից	նորա սպարապետ արեւելից
առաքեաց առ նա բազում	առաքեաց առ նա բազում
գանձիւք և արք պար ...	գանձիւք։ Եւ արք Պարսիկք,

Ա ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ բ	ՏՊ. էջ 182
չա.....	... չարութիւն նորա, սկսաւ (այնուհետեւ?)
ճուճնեաւ խոր..........	... այլ եւ խորհուրդս յաւ-
ելուլ, իբրեւ ոք զի ի	ելուլ, իբր ոք զի ի հուր
բորբոքեալ յաւելուցու	բորբոքեալ յաւելլով
բազում նիւթս փայտի։	բազում նիւթս փայտից։
Քանզի ուստի սակաւ մի	Քանզի ուստի սակաւ մի
կասկածոտ էր անտի աներկ	կասկածոտն էր, անտի աներ-
իւղ հաստատեցաւ վաս	կիւղ հաստատեցաւ. վասն
ն այսորիկ դրդուեցոյց	այնորիկ դրդուեցոյց
զբազումս ի սուրբ ուխտէն	զբազումս ի սուրբ ուխտէն
քրիստոնէից. էր զոր բա	քրիստոնէից, էր՝ զոր բա-
նիւք, և էր զոր սպանեալ	նիւք սպանեալ-
եաւք, և էր զոր կապանաւք	եօք, էր՝ զոր կապանօք
տանջէր, և զոր չարա	և տանջանօք, և էր՝ զոր չարա-
չար մահուամբ վախ...	չար մահուամբ վախճանէր։
էր յափշտակութիւն աանէր	Յափշտակութիւն աանէր
ընչից և ստացուածոց.	ընչից և արարոց,
եւ մեծաւ անարգանաւք	և մեծաւ անարգանօք
տանջէր զամենեսեան։	տանջէր զամենեսեան։
և իբրեւ ետես եթէ վարատ	Եւ իբրև ետես եթէ վայրատ-
եալ ցրուեցան ի բազում	եալ ցրուեցան ի բազում
կողմանս. ի խորհուրդ	կողմանս, ի խորհուրդ
կոչէր զպաշտաւնեայս	կոչէր զպաշտօնեայս
ձախակողմանն, որք կա	ձախակողմանն, որք կա-
պեալ էին ի կռապաշտութեան	պեալ էին ի կռապաշտութեանն
անլուծանելի կապանաւք	անլուծանելի հանգուցիւք,
վառեալք և ջեռ...ալք	վառեալք և ջեռեալք
իբրեւ հնոց առ ի յայ...	իբրեւ զհնոց առ այրել
...ւխտ սուրբ եկեղեց....	զուխտ սուրբ եկեղեցւոյ։

Տարայարեցի

1. Պատմական գեղեցիկ տարբերութիւն մը, բայց չեմ գիտեր որչափ ստուգութիւն ունի. վասն զի այդ ժամանակ Հայաստանի մէկ մասին արդէն Պարսիկք կը տիրէին. և Յազկերտի զօրք խնդրելու համար առ Հայս գրած նամակը՝ իբրեւ բարեկամ կամ հպատակ ժողովրդի մը գրուած նամակ է։ Տես Եղիշէ, Ա. Յեղանակ։

digitised by A.R.A.R.@